<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԾՎԱՆԻՍՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

գ. Արծվանիստ
հեռ.0933963
N 38

09 .02.2021

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Մեծարգո մարզպետ

Տեղեկացնում եմ Ձեզ, որ <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արծվանիստի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում առկա է <<Քիմիա>> առարկայի թափուր աշխատատեղ (շաբաթական 9 դասաժամ): Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի թիվ 396-ն հրամանով հաստատված <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի>> 5-րդ, 7-րդ և 11-րդ կետերի պահանջներով՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում <<Քիմիա>>առարկայի թափուր տեղը զբաղեցնելու համար հայտարարվել է մրցույթ:
Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի մարտի 12-ին, ժամը 14^{00}-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստի միջնակարգ դպրոցի շենքում:

Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ. Արծվանիստ

Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստը:
Առդիր՝ 1 էջ:

Digitally signed by SAHAKYAN TORNIK 2902690150
Date: 2021.02.09 13:54:02 AMT

ՏՆՕՐԵՆ՝ ---------- Թ.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Արծվանիստի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի քիմիա առարկայի ուսուցչի թափուր (9 դասաժամ) տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի :
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտի 09-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի մարտի 12-ին, ժամը 14:00-ին, Գեղարքունիքի մարզի Արծվանիստի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093396373 հեռախոսահամարով: